ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արևշատ, (0235)65234. 091203803.0917702, arevshat.ararat@mta.gov.am, arevshat.gp@mail.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 37 Ա

ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 15.12.2017 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ-12 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով համայնքի ավագանին

Որոշում է՝

Հաստատել Արևշատ համայնքի ավագանու 2017 թվականի թիվ-12 նիստի օրակարգը.

1. Համայնքի 2017 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին.

2. Արևշատ համայնքում 2018թվականի ,, Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին.

3. Արևշատ համայնքի ղեկավարի աշխատավարձի, համայնքապետարանի աշխատակազմի,բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակի , հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին.

4. Արևշատ համայնքում համայնքային սեփականություն համարվող հողերը աճուրդ վաճառքի կարգով օտարելու թույլտվություն տալու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԱԹԱՆԵՍՅԱՆ ԱՐԱ
2. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ
3. ՄԻԼԻՏՈՆՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ
5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՈԳՈԼ ՆԻԿՈԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արևշատ, (0235)65234. 091203803.0917702, arevshat.ararat@mta.gov.am, arevshat.gp@mail.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 38Ն

ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթներով համայնքի ավագանին

Որոշում է՝

Ելնելով անհրաժեշտությունից կատարել հետևյալ փոփոխությունները.

վարչական բյուջեի եկամուտները ավելացնել տուրքերի մասով շին թույլտվության գումար 15.0 հազար դրամ 90041515203 հաշվի վրա.

գույքահարկի մասով ավելացնել պլանը 1165.3 հազար դրամ 90041515047 հաշվի վրա և պակասացնել 740.0 հազար դրամ նախատեսելով ծախս երա

ժշտական դպրոցին 300.0 հազար դրամ 4239 հոդվածի վրա և մանկապարտոզին 140.0 հազար դրամ 4239 հոդվածի վրա.

01.06.01.55 գործառնական դասակարգման 4241 հոդվածի վրա ավելացնել 300.0 հազար դրամ.

Ծնողական վճարների պլանը մանկապարտեզի մասով պակասեցնել 262.0 հազար դրամ.

երաժշտական դպրոցի մասով ավելացնել 208.0 հազար դրամ:

01.01.01.51 գործառնական դասդակարգման 4111 հոդվածից պակասեցնել 19.0 հազար դրամ և ավելացնել 4212 հոդվածի վրա;

4241 հոդվածից պակասեցնել 6.0 հազար դրամ և ավելացնել 4234 հոդվածի վրա;

Վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 11.01.02.51 գործառնական դասակարգման 4891 հոդվածին ավելացնել 440.3 հազար դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԹԱՆԵՍՅԱՆ ԱՐԱ
2. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ
3. ՄԻԼԻՏՈՆՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ
5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՈԳՈԼ ՆԻԿՈԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արևշատ, (0235)65234. 091203803.0917702, arevshat.ararat@mta.gov.am, arevshat.gp@mail.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 39 Ն

ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018ԹՎԱԿԱՆԻ ,, ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ,, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով համայնքի ավագանին

Որոշում է՝

Սահմանել Արևշատ համայնքի 2018 թվականի ,, Տեղական տուրքերի և վճարների ,, դրույքաչափերը համաձայն հավելվածի.

Կողմ -5 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԱԹԱՆԵՍՅԱՆ ԱՐԱ
2. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ
3. ՄԻԼԻՏՈՆՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ
5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՈԳՈԼ ՆԻԿՈԼՅԱՆ

Հավելված 1

Արևշատ համայնքի ավագանու

2018 թվականի դեկտեմբերի 15-ի N 39 Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2018ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ.

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15.000 ՀՀ դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

- 200-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30.000 ՀՀ դրամ.

- 500-ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50.000 ՀՀ դրամ.

- 1000-ից մինչև 3000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50.000 ՀՀ դրամ.

- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 100.000 ՀՀ դրամ.

Գ. ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

- մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3.000 ՀՀ դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5.000 ՀՀ դրամ:

2. *Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝*

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 ՀՀ դրամ

բ. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ 5.000 ՀՀ դրամ:

6.Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի , սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի ,մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներեում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համաև օրացույցային տարվա համար 60000 հազար դրամ.

9. *Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկահոլային խմիչքների և / կամ / ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝*

ա.

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպք 9000 ՀՀ դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11000 ՀՀ դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13100 ՀՀ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20100 ՀՀ դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 26000 ՀՀ դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 46000 ՀՀ դրամ:

Բ .Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

-. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 9000 ՀՀ դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11000 ՀՀ դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13100 ՀՀ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20100 ՀՀ դրամ,

- 200ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 26000 ՀՀ դրամ,

-500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 46000 ՀՀ դրամ:

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 350դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 5000 դրամ.

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 25000 դրամ.

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 200.000 դրամ.

դ. խաղատների համար՝ 500.000 դրամ.

ե. շահումով խաղերի համար՝ 250.000 դրամ.

զ. վիճակախաղերի համար՝ 100.000 դրամ.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 11.000 դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 16.000 դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 21.000 դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 31.000 դրամ.

բ. ոչ հիմնական շ ինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1500 դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 9.000 դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 16.000 դրամ.

14) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող

գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

15) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 100.000 դրամ.

16) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 5000 դրամ.

2. Սույն հոդվածով սահմանված դրույքաչափերը համայնքի ավագանու որոշմամբ հաշվարկվել 0.5 գործակցի կիրառմամբ:

4. Սույն հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկվել 0.5, գործակցի կիրառմամբ:

14. ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է՝ 1.000 դրամ

2. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների / այդ թվում՝ դրանց վերակառուցումը. Վերանորոգումը. Ուժեղացումը. Արդիականացումը. Ընդլայնում ու բարեկարգումը/ կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է 5000 հազար դրամ.

3. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար

համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է 3000 հազար դրամ:

4.Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու հետ վերցնելու և և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի / փաթեթի/ նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմվում է 2000 հազար դրամ:

5. Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է 2000 հազա

5. Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայություններից օգտվողների համար համայնքի կողմից կամ համայնքի կողմից պատվերով մատուցված ծառայություններ դիմաց փոխհատուցման գումար 6000 դրամ.

6. Համայնքային ենթակայության երաժշտական դպրոցի ծառայություններից օգտվողների համար համայնքի կողմից կամ համայնքի կողմից պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարը համայնքի երեխաների համար 7000 դրամ

7.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար մեկ փաստաթղթի փոխհատուցման վճար 500 դրամ.

8. Համայնքի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար սահմանել համայնքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական 60 դրամ,

Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար 500 դրամ, կամ

բ. ըստ զանգվածի մեկ տոննա աղբի համար 1500 դրամ

իսկ համայնքում

4).իրավաբանական անձանց աղբահանության վճարի չափ սահմանել յուրաքանչյուր ամսվա համար հետևյալ սակագներով՝

ա.առևտրի/այդ թվում շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ մատուցողների համար - 20դրամ/1քառ.մ./.

բ.արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների համար - 5դրամ/1քառ.մ/.

գ.կրթական, մշակույթային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինությունների համար – 3 դրամ/1քառ.մ./:

Աշխատակազմի քարտուղար՝ Է.Փորթուգալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արևշատ, (0235)65234. 091203803.0917702, arevshat.ararat@mta.gov.am, arevshat.gp@mail.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 40 Ն

ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետով. ,, Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի

Համայնքի ավագային որոշում է՝

1. Հաստատել Արևշատ համայնքի ղեկավարի աշխատավարձը.համայնքապետարանի աշխատակազմի ,բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը ,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածների.

2. Ուժը կորցրած ճանաչել Արևշատ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ -39Ն որոշումը.

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից.

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԹԱՆԵՍՅԱՆ ԱՐԱ
2. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ
3. ՄԻԼԻՏՈՆՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ
5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳՈԳՈԼ ՆԻԿՈԼՅԱՆ

Հավելված 1.

Արևշատ համայնքի ավագանու

2017թվականի դեկտեմբերի 15-ի թիվ-40-Ն որոշման.

2018Թ-Ի ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Համայնքապետարանի աշխատակիցների թվաքանակը՝ 11

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ)
Համայնքի ղեկավար	1	270000
ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	130000
Համայնքի ղեկավարի խորհրդական	1	73000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
Աշխատակազմի քարտուղար /1.2 - 1/	1	180000
Աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3 -1/	1	160000
Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/	1	100000
Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/	1	73000
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ		
Գրադարանավար մշակույթի տան տնօրեն	1	73000
ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ		
Համայնքապետարանի հավաքարար	1	88000
Համայնքապետարանի վարորդ. կատարացու	1	78000
Համայնքապետարան պահակ	1	88000
	1	

Աշխատակազմի քարտուղար՝ Է. Փորթուգալյան

Հավելված 2
Արևշատ համայնքի ավագանու
2017թվականի դեկտեմբերի 15-ի թիվ-40-Ն որոշման.

2018Թ-Ի ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ 13

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	*ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ)*
Տնօրեն	1.0	160000
Դաստիարակ	0.56	72751
Դաստիարակ	0.56	77904
Դաստիարակ	0.56	77904
Դաստիարակ	0.56	77904
Երաժ. դաստիարակ	0.5	72751
Դաստիարակի օգնական	1.1	80026
Դաստիարակի օգնական	1.1	85695
Խոհարար,	1.0	72751
Տնտեսվար /օժանդակ բանվոր/	1.0	77904
դռնապահ/ լվացքարար	1.0	105000
Պահակ	1.0	72751
Հաշվապահ	0.5	72800

Աշխատակազմի քարտուղար Է. Փորթուգալյան

Հավելված 3

Արևշատ համայնքի ավագանու
2017թվականի դեկտեմբերի 15-ի թիվ-40-Ն որոշման.

2018Թ-Ի ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ
ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ 14		
Երժշտական դպրոցի տնօրեն տնօրեն մասնագիտական	1.0 0.5	75000 36400
Ուսմասվար մասնագիտական քանոն	0.5 0.8	36400 58240
Դաշնամուր	1.5	109200
Դաշնամուր	1.33	103350
Շվի- դուդուկ	1.5	117000
Դաշնամուր	1.35	105300
Տեսություն /սոլֆեջո/	1.03	74620
Տեսություն /սոլֆեջո/	1.2	87360
Վոկալ	1.0	72800
Քամանչա	1.0	78000
Դհոլ	1.75	127400
Ջութակ	1.0	78000
Հաշվապահ	1.0	72800
Հավաքարար	1.0	56800

Աշխատակազմի քարտուղար Է. Փորթուգալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արևշատ, (0235)65234. 091203803.0917702, arevshat.ararat@mta.gov.am, arevshat.gp@mail.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 41Ա

ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԵՐԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ. ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ, ՔԱՅԼԻ ԵՎ ԼՈՏԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքային սեփականություն համարվող գյուղ նշանակության, բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասերը աճուրդ վաճառքի կարգով օտարելու.

03-021-0003-0015 կադաստրային ծածկագրի տակ գտնվող բնակավայրերի բնակելի կառուցապատման 0.11հա հողամասը.

03-021-0003-0016 կադաստրային ծածկագրի տակ գտնվող բնակավայրերի բնակելի կառուցապատման 0.1254հա հողամասը.

3. 03-021-0111-0004 կադաստրային ծածկագրի տակ գտնվող բնակավայրերի բնակելի կառուցապատման 0.099հա հողամասը,

4. 03-021-0018-0003 կադաստրային ծածկագրի տակ գտնվող բնակավայրերի բնակելի կառուցապատման 0.0364 հա հողամասը

5 . 03-021-0018-0002 կադաստրային ծածկագրի տակ գտնվող բնակավայրերի բնակելի կառուցապատման 0.0253 հա հողամասը

6. 03-021-0118-0004 կադաստրային ծածկագրի տակ գտնվող գյուղատնտեսական նշանակության 3-րդ կարգի պտուղ կորիզավոր 0.08272 հա հողամասը

7. 03-021-0118-0003 կադաստրային ծածկագրի տակ գտնվող գյուղատնտեսական նշանակության 3-րդ կարգի պտուղ կորիզավոր 0.0867 հա հողամասը.

8. 03-021-0135-0024 կադաստրային խախկագրի տակ գտնվող գյուղատնտեսական նշանակության 5-րդ կարգի վարելահող 0.105հա հողամասը.

9. 03-021--0140-0012 կադաստրային ծածկագրի տակ գտնվող բնակավայրերի բնակելի կառուցապատման 0.1 հա հողամասը.

2. Օտարվող հողամասերի մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքի 100% չափով ,իսկ 03-021-0140-0012 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0.1 հա հողամասի մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքի 50% չափով.

3. Օտարվող հողամասերի քայլի չափը սահմանել 5000 հազար դրամ, իսկ վաճառվող հողամասերի լոտի չափը սահմանել՝ 0.11հա, 0.1254հա, 0.099հա, 0.0364հա, 0.0253հա, 0.08272հա, 0.0867հա, 0.105հա և 0.1 հա;

Թույլատրել համայնքի ղեկավարին կամակերպելու հողամասերի օտարումը 2018թվականի հունվարի 16-ին.

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԹԱՆԵՍՅԱՆ ԱՐԱ
2. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ
3. ՄԻԼԻՏՈՆՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ
5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՈԳՈԼ ՆԻԿՈԼՅԱՆ